


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տրեկն. ողջ դճ. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան Ծրանք 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախար խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՔԻՉ ՄԸ ԱՍՕԹ

Աղեքսանդրիա մանկավարժական խնդիր
մը ունի, կամ աւելի ճիշդը՝ մանկավարժական
ծածկոյթին տակ կը մղուի անհատական նկա-
տումներու պայքարը. եւ միթէ միշտ այսպէս չէ՞
եղած ամեն տեղ, մեծ քաղաքի կամ անյայտ
գիւղի մէջ ուր հայ դպրոց մը կայ: Թո՛ղ ըլլայ
ան հոյակապ չէնք մը, թո՛ղ ըլլայ ան խեղճ ու
ախոռ մը. միշտ անոր շուրջը կը թափառին
միեւնոյն տեսակէ աղուէներ. աղքատ գիւ-
ղացի թէ հարուստ քաղաքացի, ամենքն ալ
իրենց փառասիրութեանը, եսամոլութեանը,
չահատակութեանը թիրախը միշտ խեղճ պղծ-
տիկ հայ տղուն գլուխը կընտրեն: Ի՞նչ չար-
չարանքներ, ի՞նչ սառնասիրտներ տեսած է
ան, կը տեսնէ ու պիտի տեսնէ,

Տարիէ մը ի վեր է Աղեքսանդրիոյ ազգ-
վարժարանը ունի տնօրէն մը, Պոլսոյ հանրա-
ծանօթ ուսուցիչ մը, Պ. Արքանազեան, որ
յատուկ հրաւերով եկած է: Հիմա թաղական
աղաները կուզեն զանիկայ... պաշտօնա՛նկը-
նել. ո՛չ. հապա՞. քիչ մը գլտորել, այսինքն
տնօրէնը պարզ դասատու ընել ու անոր գըլ-
խուն վրայ դնել ուրիշ տնօրէն մը:

—Է՛հ, ի՞նչ վնաս տղաքներուն, ի՞նչ
ստորնացում ուսուցչին, ի՞նչ անիրաւութիւն,
ի՞նչ մանկավարժական սխալ, եթէ Պ. Արքա-
նազեան իրեն յաջորդ ունենայ Պ. Պէրպէր-
եանը. և միթէ անոր հրահանգներուն ներ-
քեւ պաշտօնավարութիւն մը պատուաբեր չէ՞
իրեն ու սքանչելապէս օգտակար Աղեքսանդ-
րիոյ վարժարանին հայ տղաքներուն, պիտի
հարցնեն մեր ընթերցողները:

Եւ այս հարցումը շատ բնական է: Պիտի
չգտնուի հայ մը որ չի մտաբերէ թէ՛ անշուշտ
երբ Պ. Արքանազեանի արժանիքն ունեցող անձ
մը պարզ դասատուի պաշտօնին կը վերածուի,
բնականաբար իր տնօրէնը իրմէ շատ աւելի
բարձր արժանիքով օժտուած մանկավարժ մը
ըլլալու է:

Այսպէս խորհող հայերը յստակօրէն ի-
րենց միամտութիւնը երեւան կը հանեն միայն-
ցոյց կուտան թէ՛ չեն գիտեր հայ չորպաճի-
աղային ի՞նչ տեսակ արարած ըլլալը: Տնօրէ-
նը, մանկավարժը ստեղծուած են միայն և
միմիայն չորպաճի-աղան փառաւորելու, անոր
կուսակցական նկատումներուն ուժ տալու,
անոր հըռ հպատակը ըլլալու: Մտի՛ր հայ

գիւղ մը, հարցո՛ւր թէ ի՞նչ խնդիր կայ —
«վարժապետին խնդիրը»: — Ի՞նչ խնդիր է.
«աղան չուզեր»: — Ինչո՞ւ չուզեր. — «Է՛հ,
չուզեր. աղա չէ՞ մի, չուզեր. քէֆին քէհեա՞ն
ենք»: Բայց քիչ մը պրպտէ՛ և կը տեսնես թէ՛
աղան պէտք եղածին չափ չ'ողորբոյթ, ստոր,
ողորմելի, ստրուկ չի գտներ գեղին վարժա-
պետը, ուստի «լաւագոյնը» կը փնտռէ: Այս
պարագային մէջ «լաւագոյնը» լաւին թշնա-
մին չէ՞:

Մտի՛ր մեծ քաղաք մը:

— Ի՞նչ խնդիր կայ:

— Վարժապետին խնդիրը:

— Ի՞նչ խնդիր է:

— Աղան չուզեր:

— Ինչո՞ւ չուզեր:

— Աղա չէ՞ մի, չուզեր. քէֆին քէհեա՞ն
ենք:

Փնտռէ՛ չուզելուն պատճառը և պիտի
գտնես թէ միեւնոյն է ինչ որ գեղին մէջ:

Կրնա՞ք տարակուսիլ թէ Աղեքսանդրիոյ
աղաներն ալ ո՛ր է կերպով կը տարբերին գե-
ղացի աղաներէն:

Եթէ Պ. Արքանազեան իր տեսչական պաշ-
տօնին անյարմար է, մենք չենք կրնար պա-
հանջել որ «խաթեր համար» անիկայ պահուի,
ո՛չ: Պէտք է պարզապէս հրաժարեցնել ու
դպրոցէն հանել: Աշակերտը խորին արհամար-
հանք կուենայ իր ուսուցչին նկամամբ երբ
տեսնէ թէ՛ անիկայ երէկ տեսուչ էր և այսօր
պարզ դասատու: Այդ արհամարհանքը չի ծը-
նիր, երբ գոնէ յայտնի ըլլար թէ նոր տեսուչը
մանկավարժական բարձրագոյն անձնաւորու-
թիւն մըն է, ինչ որ չէ դժբաղդաբար այս
պարագային մէջ:

* * *

Փառոս առանց նկատողութեան առնելու
այդ աղաներուն գձուձ չահերը, հրապարա-
կային խնդիր մը կընէ Աղեքսանդրիոյ վար-
ժարանին տեսչութեան խնդիրը որ պէտք է
լուծուի՝ արդարութեան, իրաւունքի ու «մեր
տղաքներուն շահուն» համաձայն և ոչ թէ «ա-
ղաներուն շահուն» համաձայն:

Պարոն թաղականներ, կուսակցական շա-
հե՛ր ունիք, առեւտրական նկատումներ՝ անձ-
նասիրութիւններ պիտի գգուէք, ահա՛ սըր-
ճարանը, ահա՛ պորտան, ահա՛ փողոցը:
Բայց դպրոցը ձեր antichambre, ձեր վա-
ճառատան մասնաճիւղը չէք կրնար ընել:

Հայ ուսուցիչը իբր ձեր ստորագաս սպասաւո-
րը չէք կրնար նկատել: Մեր բողոքը կը բարձ-
րանայ ձեր անխղճութեանը դէմ:

Եթէ խիղճ չունիք, գոնէ քիչ մը ամօթ:
Ծայրայե՛ղ է այս պահանջումս:

ՊԱՐՏԻՔ ԵՒ ԳԻՏԵԼԻՔ ՍԻՐՈՅ

Առ Ս. Մ.

— Սիրոյ մէջ, զարմանայի է, որքան ցած խա-
սիս, այնքան շատ բան կրնաս հասկնել:

— Արեւը լոյս կուտայ և վարդը բոյր, հողը հաց
կուտայ և հարուստը ոսկի, ծառը պտուղ կտնայ
և բանաստեղծը հոգին, միայն կրնն է պարզ-
կութիւն կուտայ մարդու:

(Հին ազգայնապաշտութիւն)

— Սէրը միականի է, իսկ էրկինները կոյր:

— Սէրը արքայութեան բռնապետ է, իսկ ստրու-
թիւնը դժոխքին:

— Ամուսնութեան մէջ կին մը իր ձեռքը կու-
տայ ամուսնոյն, և սիրտը ուրիշին:

— Համարը՝ սիրոյ մանրուք դրամն է:

— Պարտամուրհակի մը և սիրոյ մէջ սա ստոր-
բերութիւնը կայ որ, պարտամուրհակ մը օրով կը
հաշուի, իսկ սէրը գիշերով:

— Կին մը երբէք «այո» չըսեր, բայց անտիկ «ոչ»
եր ունի որ տասը «այո» կարծեն հասկնողին համար:

— Ապահովութեան տեսակէտով տգեղութիւնը
այն է կնոջ համար՝ ինչ որ է milnerի գրաւորակը
ստակին. հանգիստ կրնաք ըլլալ մօտեցող չըլլալ:

— Գեղեցիկ կին մը ունենալը լեցուն սարճատակ
մը պահելու կը նմանի. միշտ փռանգ կայ:

— Սէրը բայ մըն է զոր խոնարհեալ համար եր-
կու հոգի պէտք է. իսկ ամուսնութիւնը անձնաս-
պանութիւն մըն է զոր կատարելու համար դարձեալ
երկու հոգիի պէտք կայ:

ՌԱՏԱՄԷՍ

Կ. ՊՈԼՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Պէրլինի թերթերը Կ. Պոլսէն հեռագիր
մը կը հրատարակեն, ծանուցանող թէ Վիլ-
հելմ Բ. խոստացեր է Սուլթանին այցելու-
թեան երթալ: Երկրորդ պալատին մէջ պատ-
րաստութիւններ կը տեսնուին Գերմանիոյ կայ-
սեր ընդունելութեան համար: Այս լուր մին-
չեւ ցարդ ո՛չ հերքուեցաւ ո՛չ հաստատուեցաւ:

— Պ. Մամբուրտաթօ, Կ. Պոլսոյ հեղե-
նական դեսպանը, որ պատերազմի ծագման
պահուն մեկնած էր, իր պաշտօնատեղին կը
վերադառնայ՝ հաշտութեան վերջնական պայ-
մանագրին վրայ բանակցելու:

— Օսման Բիւշտի և Սէյֆուլլահ փաշա-
ները օսմ. կառավարութեան կողմէ պատուի-
րակ կարգուեր են այն զինուորական յանձ-

նախորդողին որ պիտի ճշգրէ թուրքահեղինական նոր սահմանագրութիւնը :

—Կ. Պոլսոյ գերմանական դեսպան Պ. Սաուրման Եւլը հանգստեան պիտի կոչուի յառաջիկայ մարտ ամսուն , և իրեն պիտի յաջորդէ Պ. Ֆոն Բիտելլէն Վէլսթէր :

—Սուլթանին հրամանով յանձնաժողով մը կազմուեալ է որ պաշտօն ունի քննել թէ թեսալիոյ մէջ իսլամ ժողովուրդի թիւին համեմատութեամբ մզկիթներ կա՞ն և հակառակ պարագային մէջ՝ գնահատել նոր մզկիթներու կառուցման ծախքը :

—Սթանսարս կիմանայ Կ. Պոլսէն թէ Դուռ տակաւին պատասխան ստացած չըլլալով Կրէտէի նկատմամբ տէրութեանց ուղղած իր ծանուցագրին , ի մօտոյ ազդու բողոքագիր մը պիտի գրէ :

Ատեն մը , եւրոպական Տէրութիւններն էին որոնք նօրա ու բողոքագիր կուղղէին Դուռն հիմայ ճիշդ հակառակը կը պատահէ :

—Վիէնայի Բօլիքիշէ Բօրեսթօնսէնը նորագոյն մանրամասնութիւններ կը հրատարակէ Կ. Պոլիս վերադարձող ժէճ-թիւրքերուն վրայ :

«Սոյոյ տղաքիւն կը հաստատուի այն լուր թէ հազարաւոր Ահմէտ պէյ , որ այդ գոմիթէին անդամ էր ու վերադարձաւ , Պէլլըատի օսմ. գետպանատան զինուորական կըցորդ անուանուած է : Տարթոր Հիւսնի պէյ , երբեմն պաշտօնեայ Դուռն իրաւագիտական գիւանին և որ անցեալ տարի Եւրոպա փախաւ այն միջոցին երբ ժէճ-թիւրք կուտակեցութեան շարժումը իր գազաթնակէտին(») հասած էր , այս օրերս Կ. Պոլիս պիտի վերադառնայ ու իր նախկին պաշտօնին մէջ վերահաստատուի , կրկնապատիկ ամսաթոշակով : Ծովային սպայ Մէհմէտ պէյ , որ վերջերս Տրիպոլիս արքայութեան էր , ներման արժանանալով Կ. Պոլիս վերադարձեր է» :

—Օսմ. Պանքայի ընդհանրէն Սըր Էտկար Վինսընդ , որուն համար ըսուեցաւ թէ պիտի հրաժարի այդ պաշտօնէն , այս օրերս երկար տեսակցութիւն մը ունեցեր է Սուլթանին հետ որ փափագ յայտնեց է անոր՝ այս միջոցի չի թողուլ Թուրքիան , որովհետեւ իր աշակցութիւնը կարելի է Յունաստանի հետ կնքել հաշտութեան ինչպէս նաեւ կարգ մը ելմանական բարենորոգումներու համար որոնք պիտի գործադրուին պատերազմական առգանքին վճարուելէն ետք :

—Սթանսարսին ուղղուած հեռագիր մը կը հաղորդէ թէ Իրատէ մը կարգիւն ղէնքերու մուրքը թուրքիոյ մէջ : Սուլթանը առաջարկներ կ'ընէ եղբւր Անգլիոյ մերձեցում մը առաջ բերելու համար թուրքիոյ հետ :

—Վիէնայի թերթերը կիմանան Կ. Պոլսէ թէ Դուռը որչէր է՝ հաշտութեան նախաշուիչ պայմաններուն Յունաստանի կողմէ ընդունուելէն անմիջապէս ետք՝ իրենց տեղերը վերադարձունել թեսալիոյ և Եաննայի զօրաբանակներուն երկու երրորդը , այսինքն մատուցուած 75,000 հոգի ու առժամայէս 40,000 կանոնաւոր զօրք պահել ի Թեսալիա : Պատերազմական նախարարը այս որոշման գործադրութեան նախապատրաստութիւններով կը զբաղի :

—Դեսպանները պահանջած էին որ Սուլ-

թանը ներում հրատարակէ այն օսմանեան հպատակներուն նկատմամբ որոնք յունական բանակին մէջ ծառայած էին պատերազմի ժամանակ :

Այս առաջարկ ընդունուած չէ սակայն , և հաշտութեան վերջնական կնքումէն ետքը միայն պիտի գործադրուի :

—Կ. Պոլսէն կը հեռագրեն Թայիլանդի թէ Սուլթանը Գերմանիոյ աշակցութեան վրայ վստահելու երեւոյթ ունի կրէտական խնդրին կարգադրութեան համար :

—Կրտսի թէ անգլիական կառավարութիւնը ելմանական կարեւոր պաշտօնով մը Հնդկաստան պիտի գրէ Սըր Էտկար Վինսընդը որ , հակառակ իրեն եղած սպիտակ ներուն , որոշած է առաջիկայ յունաստանի վերջնապէս հրաժարիլ Պանք Օթօմանի ընդհանրէնութենէն :

Ա Յ Ժ Մ Ե Ո Ւ Թ Ի Ն

Ոսկեծամուկ հաւագգեստով , կապոյտ ակնոցով , խրոխ փառաւորով , պաշտօնական աւան ի ձեռին , հրամայական կերպարանով մարդ մըն է Առաջնորդարանի բարապետը որ պաշտօն ունի ֆանի մը օրէ ի վեր ազգ. տոբի վերաբերող նամակները — Առաջնորդարանի օրհնաքեր այդ չէքերը — ցրուել հայերու կարող դասակարգին մէջ :

Այդ նամակները չեն հասնիր : Ընկերութեան արձարանին սեղաններուն վրայ , պառնու մարմարին առջեւ , նպարավաճառին կամ ծխափաճառին թէղեհահին բոլ , ամեն տեղ պիտի տեսնե՞ք այդ նամակներէն որոնց վրայ տարբեր հակած են հասցեները կարգաւոր եւ բարապետին՝ դարաւերջի այդ պզտիկ Պօնաբարքին բացատրելու համար անոնց տեղերուն ո՛ր բնակիչը կամ ո՛ր գնորդն էին :

Նամակի մը հասցեն այն է սիգանալ բարապետին համար ինչ որ հին եգիպտական մոմիայի մը վրայ գտնուած կնիքները այս տղերք գրողին համար :

Գրել կարդալ գիտողներու այս առաստեղան մէջ՝ Սահակ Մեսրոպի գիտին հետ գծուած լեկուն այդ տեսակ պաշտօն յանձնելը քերտիսն մըն է ազգային շահերու ղեկը ձեռնարկուն մէջ ունեցող փառաւորական ժողովի աշխուշաւ արտակարգներուն համար :

Մէկ նամակի մը հասցեն կարդալ տալու համար երեք հարիւր պահարաններ արձարանի մը սեղաններուն վրայ պարզեցնել աւօր մըն է չափույին եւ միեւնոյն աւան պահի չի բերեր զայն գործածող դիւանին :

Անագրոնութիւն մըն է այս որուն վրայ Գաղափարական ժողովին ուղարկուելը հրաշքեղ յագործեան պարտականութիւն կը համարուի :

Ինչ գեղ գաղափար պիտի տա օտարագրի մը , երբ տեսնէ որ ֆան հայ ի մի ժողովուրդ կը խօսի , կը պոռա , կը վիճի , պաշտօնական նամակի մը հասցեն շուրջը :

Ազգ մը որ երկաթուղիի վակոններու պէս երեք դասակարգի կը բաժնուի («բոս հաճոյս» վաճառողները կառախուրթին baggageի

այսինքն քեռի վակոններ են) եւ կը բռնադատուի տարեկան գումար մը վճարել Սրբնոյին , փոխարքաւար իրաւունք կունենայ գունէ կարդալ գիտող բարապետ մը ունենալու :

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

«ԼԸ ԲՅՕՄՊԱ»-ԻՆ ԽԱՓԱՆՈՒՄԸ

ՍԵ ՎԱՐՊ՝ ԱՊՐԵՑԱՆ ԸՍՈՒՄ
ՈՐՀԱՎԻ ԿԱՊՐԻՆ ՎԱՐՊԵՐ.
ԱՌԱՍՈՏ ՄԸ ՄԻԱՅՆ . . .

պիտի կրնայինք ըսել՝ Աթէնքի Le Combatին համար , եթէ իր վարդապետ թուղթը ծաղիկներուն թագուհին միայն յիշեցունէր. դժբաղդաբար , պարունակութիւնը գոյնէն աւելի կարմիր , ընկերավարական կամ անիշխանական նկատուեցաւ Պ. Պիտանեանի (Belek) հաղիւ երկու ամէն ի վեր հիմնած լրագիրը նայն իսկ Յունաստանի պէս ազատ երկրի մը մէջ :

Կիմանալք արգարեւ թէ հելլէն կառավարութիւնը արդիւր է Le Combatին հրատարակութիւնը , ու անոր խմբագիր-անօրէնը հարկադրուեց է թողուլ Աթէնքը , երթալ փնտռելու համար աւելի հիւրընկալ քաղաք մը :

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Աղեքսանդրիոյ թաղական Խորհուրդէն ստացանք հետեւեալ հերքմագիրը զոր հաճութեամբ կը հրատարակենք .

Փարոսի հիփոթեքեր Զի Թուոյն մէջ զարմանքով կարգաւորեցին այն դրոյշը որուն համեմատ իր թէ տեղւոյ միջազգային նպատակաւոր յանձնարարութեամբ վստահութեան խնդիր յարուցած ըլլայ ի նպատակաւոր թաղականաց կազմակերպուած վերջին գաղտնի հանդէսին հասցիքը մեզի յանձնելու մասին :

Պարտք կը համարենք ներկայիս հրատարակուող յայտարարութիւն թէ այդ դրոյշ թաղականացին անհիմն է և կարգ մը մարդոց կողմէ յերկրուած ըլլալու է՝ չենք գիտեր որովայն պատճառներով :

Յանձնարարութիւն Գանձապետ Պ. Ապէթ ինքնաբերաբար յանձնած է Խորհուրդայն այն ամեն գումարները զորոնք պարտաւորաբար գտնուած է ի հաշիւ գաղտնի հանդէսին ու լոկ անշուստ գումար մը տակաւին կը մնայ տարտիկ օրն որ նոյնպէս պիտի յանձնուի մեզ երբոր դանձուելու ըլլայ :

Խնդրելով որ հաճիք ներկայիս հիւրընկալել Զեր պատուական թերթի յառաջիկայ թուոյն մէջ ,

Մնամք յարգանքով
Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ
Փոխ-Ասեմայէտ
Զ. Ե. ԲԻԶԼԵՐ

Ընթերցասիրաց ընկերութեան երրորդ լսարանը որ շաբաթ գիշեր տեղի ունեցաւ , նախընթաց երկու երեկոյթներուն պէս զուրկ էր ակնկալուած յաջողութենէն :

Տիար Կարապետ Նաւասարդեան ընտանի ոճով մը խօսեցաւ հին ազգայն քաղաքակրթութեան վրայ , ապագային վերապահելով նորերուն վրայ խօսիլ :

Տիար Պերճ Օհանեան ամէն մը ի վեր հրաժարած է Աղեքսանդրիոյ թաղական Խորհրդոյ անդամակցութենէն : Տիար Օհանեանի նման գործօն ու անձնուէր երիտասարդի մը հեռացումը զգալի պակաս մը կը թողու այդ մարմնին մէջ :

Թայրեզի մէջ կը կարգանք թէ Լորտ Սո-
լըզպէրի նամակ մը ուղղելով Ուէսթմինսթըրի
Դուքսին՝ անոր հոգածութիւնը հրաւիրեց է
Պուրկազի (Պուլկարիա) հայ գաղթականներու
խզճալի վիճակին վրայ որ մեծապէս կը կարօ-
տի գրամական նպաստի :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Բարձր Խորհուրդ ամսոյ 28ին հինգշաբթի օ-
րը Գահիրէ պիտի վերադառնայ, Ապտինի
պալատին մէջ ընդունելու համար Սիամի թա-
գաւորը որ նոյեմբեր 1ին Եգիպտոս կը սպաս-
ուի :

— Լորտ Բրոմբը որ Աղեքսանդրիա գա-
ցած էր Բարձր Խորհրդին ներկայանալու, կի-
րակի Գահիրէ վերադարձաւ :

— Անգլիական գրաւիչ բանակին նորըն-
տիր հրամանատար զօրավար Սըր Ֆրանսիս
Կրէնֆիլդ այս իրիկուն Եգիպտոս կը հասնի :

Անգլիացի սպաները կայարանէն պիտի
ընդունին զինքը և Լինքոլնշայր Րէճիմէնդի ա-
ռաջին վաշտը՝ իր նուագախումբին հետ մէկ-
տեղ՝ զինուորական պատիւներ պիտի ընծայէ:
Ըստ սովորութեան, թնդանօթի տասներեք
հարուած պիտի արձակուի :

— Էջ Մոշիտի խմբագիրը վերջապէս չի
կրցաւ օձիքը ազատել զինքը հայաժողովրդին
ձեռքէն՝ Գերմանիոյ կայսեր գէմ գրած ըլ-
լալուն համար : Գահիրէի վերաքննիչ աստեա-
նը չարաթ օրը զբաղեցաւ այդ գատով և Պ.
Սարգիս Սալիմը դատաւարանէ մէկ շարքով
ուսն բանտարկութեան և հաղար զրուշ տու-
գանքի : Պ. Սարգիս դատարանէն ուղղակի
բանտ առաջնորդուեցաւ :

Վերաքննիչ ատենանք, այս կերպով, մեղ-
մացուցած է պատժական տանին որոշած
բանտարկութեան վճիռը որ իսկզբան տասն
ամիս էր ու բարձրացուցած է գրամական
տուգանքը որ 5 ոսկի էր :

— Ռումանիոյ գահաժառանգ իշխանն ու
իշխանուհին այս ձմեռ Եգիպտոս պիտի այ-
ցելեն :

— Բարձր Խորհրդին եղբայրը՝ Բուէնա Մօ-
համէտ Այի Եւրոպայէն վերադարձաւ կիրա-
կի իրիկուն և յատուկ կառավարմամբ Գահի-
րէ հասաւ :

— Միլերկրականի անգլիական նաւատոր-
մին առաջին բաժինը, որ կը բաղկանայ տաս-
ներկու մարտանաւէ, Եգիպտական ծովեղ-
րերուն երկայնութեամբ չըջան մը պիտի կա-
տարէ մօտերս :

— Մաթարիէյի կայարանին մօտ հայ սրճա-
րանապետի մը որդին, Գասպար անուն տանը վեց
տարեկան պատանին՝ երէկ խեղդուած գտ-
նուեցաւ՝ հօրը պարտէզէն քսան մէթը հեռա-
ւորութեամբ պզտիկ ջրանցքի մը մէջ :

Գասպար կիրակի իրիկունէն ի վեր ան-
յայտ եղած էր տունէն և կը կարծուէր թէ
Գահիրէ կը գտնուի. երէկ միայն քանի մը
Ֆէլլահներ անոր գիակը գտան բոլորովին մերկ
վիճակի մը մէջ :

Ռատիկանութիւնը քննութիւն բացած է
այդ ցաւալի արկածին պատճառը փնտռելու
համար :

— Եգիպտական մաքսատան տնօրէնու-

թեան կողմէ հրատարակուած վիճակագրին
նայելով, վերջին սեպտեմբեր ամսուան մէջ
ծխախոտի ու թէմպէքի մարտատուքը բարձ-
րացած է 87,890 եգիպտական ոսկիի : Անց-
եալ տարուան միւլենոյն ամսուն 85,257 ոսկի
էր այդ մաքսատուքը :

— Արաւքին գործոց նախարար Պուլթոս
փաշա Ղալի որ արձակուրդով Ֆրանսա գացած
էր, երէկ վերադարձաւ Մէսաթըրի շոգե-
նաւով :

— Չմեռնային եղանակը փայլուն ու ոգե-
ւորեալ ըլլալ կը խոստանայ այս տարի եգիպ-
տական մայրաքաղաքին մէջ : Անցեալ ձմեռէն
չատ աւելի թուով զբօսաչրջիկներ կը սպասուին
որոնց շատերն հիմակուց իրենց սենեակները
վարձել տուած են Գահիրէի մեծ օթէքներուն
մէջ :

— Եգիպտական երկաթուղեաց վարչու-
թեան նախագահ երէկ մեկնեցաւ Գահիրէէն,
երթալ աչքէ անցունելու համար Ստորին Ե-
գիպտոսի գիծերը ու կայարանները :

— Պ. Բօսթի Մէյմարաքի՝ Բապայի մեծ
վաճառատանց տնօրէնը, քանի մը օրէ ի վեր
վերադարձած է Եւրոպայէ ուր գացած էր
ձմեռնային նորութիւններ գնելու :

Ի մօտոյ այդ նորութիւնները ի յայտ պի-
տի դուրին հանրածանօթ վաճառատանը մէջ :

— Հանրութեան ուշադրութիւնը կը հրա-
ւիրուի եգիպտական 3 և 10 դուրուշնոց դը-
րամներուն վրայ որոնց կեղծերը մեծ քանա-
կութեամբ շրջաբերութեան մէջ են այս մի-
ջոյիս :

Քաֆէ Էփրօնիէն երկուս նուագախումբը որ
Էդիպէրիէի մէկ նեղ փողոցին մէջ կը բնակի, շարաթ
իրիկուն, իր անգամուհիններէն մէկը քիչ մնաց պիտի
կորսնցնէր :

Ռիկիոյ հայրենակից այդ երաժիշտները որոնք
քսան հոգիէ կը լսողանան, սովորութիւն ունին ի-
րենց մէջ տան խնամքները յանձնել իրենց խարտեաշ
ընկերութիւններուն որոնք յաջորդաբար այդ պարտու-
կանութիւնը կատարեցին :

Շարաթ իրիկուն կարգը սրիորդի մըն էր որուն
լուսազոյն յատկութիւնը ջութակ գործելը չէ :

Հեռեւորար իր շուրջը գարծող երիտասարդնե-
րէ մէկէն խնդրած էր նոյն օրուան յետ միջօրէն
միատեղ անցնել եփելու համար . . . խուսիքն ճաշը :

Ատանի հրապարիչ հրուէր մը Ս. Առաքեալները
անգամ չ'պիտի կրնային մերժել :

Կերեւայ որ շատ կարեւոր գործերով զբաղեցան
օրիորդը և երաժշտութիւնը պարունը, որով երեկոյեան
ճաշը չի պատրաստուեցաւ. և իրաւունք ունէին, սի-
րային վայրկեաններու մէջ միայն ներկան նշանակու-
թիւն ունի, ուստի անոր մօտէն կանցնի :

Բայց այս կերպով չէր մտածեր նուագախում-
բին պետը, որ երբ առտուան ժամ երկուքին տուն
վերադարձաւ խուսիքն հետ անօթի ծարաւ և ալ-
ռայի տակ գնեկի րան մը չի գտաւ, բարկութենէն
կրակ կտրած հոյակապ ապտակ մը իջեցուց գեղանի
օրիորդին երեսին որուն վրայ քիչ մը առաջ սիրա-
տուցոր շրթներ իրենց պտտակը կը յագեցնէին :

Վէս օրիորդը, այդպիսի նախատինքն մը վերա-
ւորուած չի կրնար խնդրութեւ, զէպ ի պատշաճ
յատուցելով ինքզինքը վար նետեց :

Ողորմելի վիճակի մը մէջ վեր բերին խեղճ աղ-
ջկան մարմինը որ այժմ յանձնուած է բժիշկներու
խնամքներուն :

Բաղոյակաւ. — Օրիորդ մը մէկուն հետ իր սէրը
եփած ատեն՝ կերակուր եփելն ալ մոռնալու չէ :

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Յունաստանի նոր նախարարութիւնը կազմուե-
ցաւ սապէս .

Պ. Չայիմիս, նախարարապետ և արտաքին գոր-
ծոց նախարար :

Զօրավար Սփընքի՝ պատերազմական նախա-
րար :

Պ. Հաճիբիբեարու՝ ծովային նախարար :

Պ. Քօրլաս՝ ներքին գործոց, Պ. Թօման դատական
և Պ. Բանակէօթօրու՝ կրթական :

Իսկ ելմտական նախարարի պաշտօնը ընդունեց
է Պ. Սթըյքիթ, Աթէնքի ազգային պանթային տնօ-
րէնը, յայտարարելով որ ելմտական կարգադրութիւն
մը պիտի ընէ՝ պատերազմական տուգանքի վճարման
համար, որմէ անմիջապէս ետք պիտի թողու նա-
խարարական պաշտօնը և Պանթային տնօրէնութիւնը
պիտի վերստանան :

Այս առտուան հեռագիրները զորս կը հրատա-
րակենք ի ստորեւ, ցոյց կուտան թէ հելլէն խորհրդ-
դարանը գումարուելով երէկ, վստահութեան բուէ
տուեր է նորակազմ նախարարութեան որուն կը մնայ
բանակցիլ և ստորագրել հաշտութեան պայմանագի-
ղիւր, առանց անոր մանրամասնութիւններով զբա-
ղեցնելու երեսփոխանութիւնը :

Պ. Չայիմիս ու իր պաշտօնակիցներ լաւ համա-
րում ու համակրանք փայելով անձնատուրութիւններ
են երկրին մէջ, զոր արդի տաքնապալի ու փափուկ
կացութենէն ազատելու կը կոչուին :

Յունական թերթերու տեղեկութեանց նայելով,
յոյն հարուստները իրենց մէջ հունգարականութիւն մը
բացեր են պատերազմական տուգանքի գումարը
հայթայթելու համար որպէսզի ելմտական քանդորի
հաստատման պէտք չի մնայ : Մինչեւ ցարդ ստորա-
գրուած գումարն է քառասունքիլօ միլիոն տրաքիս
որուն 15 միլիոնը Երկրիս թագաւորը ստարագրուեց
է, ու մնացեալ 31 միլիոնը՝ ութ-ստոր հայրենասէր
յոյն սեղանաւորներ միայն :

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

Աթէնք, 5 հոկտեմբեր. — Նախարարապետ Պ.
Չայիմիս խորհրդարանին ներկայանալով, յայտարա-
րեց թէ նոր դահլիճին նպատակն է ազգային խըն-
դին լուծումը : Պ. Չայիմիս խնդրեց ժողովէն որ
իր նիստերը դադարեցունէ :

Պ. Պ. Տէլեմիս և Տէլիօթիս յայտարարեցին
թէ ուժ պիտի տան նախարարութեան,

Խորհրդարանին վստահութեան բուէն կը ցու-
ցունէ թէ հաշտութեան պայմանագրով պիտի ըն-
դունուի :

Աթէնք, 6 հոկտեմբեր. — Խորհրդարանի բոլոր
կուսակցութիւնները Պ. Չայիմիսի շարժը համախմ-
բուած ըլլալով, կառավարութիւնը ծանոյց Տէր-
թիւններուն թէ պատրաստ է հաշտութեան վերջնա-
կան պայմաններուն վրայ լուծակցիլ :

ԼՈՆՏՈՆ, 5 հոկտեմբեր. — «Մօրնին Բօսթ»
կըսէ թէ Գերմանիոյ հակառակորդական կուսակցութիւնը
կը շարժի և որոշեց է Եգիպտոսի խնդրով յարու-
ցանք :

ԱՍՏՈՒԾՈՅ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՅԸ

(ԹԱՐԳՄԱՆԱԲԱՐ)

Երբ Տէրն ստեղծեց երկինքը ու պայծառ,
Թափառոտ գետեր, կրանիղ լեռներ,
Փափկիկ ծաղիկներ. երբ իր ստրին ծայր
Մէկ ցնցմամբ զբաւ ալխարհի ի յերեր :

Ստեղծեց մարդը, և քնքու ձեռքէն
Բըռնած վեհապանծ սուրբ աջն անեղին՝
Յոյց տուաւ անոր խիեղերէն ամէն,
Չերթ հեզահամբոյր հայր մ'իւր վարդ տըղին :

Մարդն իսկոյն տեսաւ, առտուն խնդարար,
Վարդը լուսանշոյլ ի ցոլ և ի շող,
Ինչ սըրտագրաւ, ինչ ակնասպարար,
Չայն վայելելու տենջ ունէր մաշող :

«Ո՛հ ինչ սիրուն է», ըսաւ ձեռնամած,
Եւ ինչպէս երկչոտ մանուկ՝ ծննդադի-
Գետնէն վարդ բազեց ըզգոյշ, մեղմ, կամա՛ց,
Հոտոտելիքին բոյր անուշ, ընտի՛ր :

Աստուած մարդն հանեց լեռներէն շխտակ
Եւ անոնց հըսկայ վեհ կատարները
Մըշտապէս ծածկող փայլուն, ըսպիտակ
Ձիւնէն շրջան մարդուն աչերը :

«Ո՛հ, ինչ սիրուն է», գոչեց խնդադին.
Եւ երբ թաւալած ձեռն իջնոր տեսաւ,
ճամբան՝ յառիճիւր յայն իրեն աչքին,
Լեռնէն քիչ մը ձիւն վեր առնեմ, ըսաւ:

Աստուած տարաւ զայն երկնային կայան,
Ուրիշ ցոյց տուաւ աստղէ շաւիղներ
Այնքան լուսաշող՝ որ հոգին մարդկան
Տեսնելու ցանկայ սըլսնալ ի վեր:

«Ո՛հ, ինչ սիրուն է», ըսաւ թեւարաց,
Երկրիս գիշերուան քօղն աղջտիւղին
Լուսաւորելու՝ մարդն երկնադէրաց
Զոյգ աստղեր առաւ, նըւէր Սլարջին:

Արդ, յոգնած ճամբէն խիտ երկարատեւ՝
Այս տըխտը երկիրս ետ դարձաւ մարդը,
Մըրախեց կապոյտ ծածկոյի ներքեւ,
Մօտ պահելով ձիւնն, աստղերն ու փարդը:

Աստուած ուզելով որ մարդն առտուն
Երբոր արթննայ՝ տեսնէ, ըզմայրի
Զիւնը մաքրափայլ. աստղերն չղջողուն,
Վարդը կարմրազեղ միայած ի մի:

Ուղեւով որ նա ըլլայ երջանիկ,
Ուղեւով որ նա չի բաշէ կարօտ
Հրեշտակներուն՝ սպրեւով մենիկ,
Այլ սպրի միշտ գոհ, հոգեով հիացկոտ,
Խորհեցաւ շինել իր դուռն-գործոց.
Առաւ վարդն ու ձիւնն և աստղերն կրկին,
Վարդէն շինեց այտ, ձիւնէն՝ ըստինք, ծոց,
Աստղերէն աչեր, բոլորէն՝ մի կին...:

Մ. Շ.

ՐԱՖԳԻԻ ԳՈՐԾԵՐԸ

Իւրաւանայի պայմաններով

Ստանձնած ըլլալով Բաքիի երկասիրութեանց
տարածումը Եգիպտոսի մէջ, չափաւորա՝ գրքերէն
ունիմ միշտ պատրաստ ծախուելու համար:

Սպառուածներէն՝ հետեւեալ երեք կտորներու
տպագրութեանը ձեռնարկուած է Եգիպտոսի մէջ
ամենաշքեղ կերպով:

ՍԱՄՈՒԵԼ. Ա. Բ. Ե. Դ. հասո՛ւ

ԴԱԻԻԹ ԲԵԿ Ա. Բ. Ե. Դ. » վերջաբանով

ԿԱՅԾԵՐԻ Բ. հասո՛ւր լիակ սաւր

Իւրաքանչիւր գիրք առանձինն կարծէ 5 շիլինգ
25 դահեկան ուղի: Երբքը միասին 12 շիլինգ, 60
դահ. ուղի. ըստ տեսնելէ վերջ 1 անգգ. ոսկի:

ԲԱՅԱԼԵ Ե ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թէեւ ասկէ առաջ որոշեալ տունն մ'ունէր,
(մինչեւ սեպտ. 1) սակայն և հիմայ սրովհետեւ տը-
պագրութիւնը միայն յունուարի մէջ կուտարտի, ի
գիւրութիւն դեռ եւս չը բաժանորդագրողներու,
կը շարունակեմ տարածել բաժանորդութիւնը
հետեւեալ կերպով:

Ինչպէս յիշեցինք, իւրաքանչիւր բաժանորդա-
թերթ երեք գրքերու համար կարծէ 12 շիլինգ,
60 դահեկան ուղի:

Այժմ մինչ տպագրութեան ըրանալը կայ երեք
ամիս, 12 շաբաթ. հսկա. 1է սկսեալ, որով իւրա-
քանչիւր բաժանորդագրող անձ կը սրարտի վճարել
շաբաթը 1 շիլինգ, 5 զրոյ. ուղի:

Անոնք որ աւելի ուշ կը բաժանորդագրուին,
պէտք է վճարեն առաջին տարի. որոշեալ թուա-
կան (հոկտ. 1) է անցած օրերու շաբաթավճարը,
դարձեալ օրին վերջացնելու համար. իսկ այս պար-
զապէս գիւրութիւն մ'է որ կընծայեմ միանուագ
վճարելու անկարող անձանց համար, որոնք այս
կերպով անգագաւապէս պիտի ունենան վերոյիշեալ
մեծանուն վրայտանին գործերը:

Բաժնի միւս երկերէն ալ շարաթափվածարով կա-
րելի է վաճառուիլ փախաբողներուն:

Դիմել ի Գահիրէ

Հնկեմութիւնը. — ուղղակի ինձ

Պապ-Էլ-Խալիֆ. — սեղանաւոր տիար Ս. Միրան.
եանի խանութը:

Օտար երկիրներէն՝ հետեւեալ հասցէին

M. Egavian

(Poste restante)

Caire

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երգի

ԴՐԱՄԱՏՈՒՆ
ԱԼԵԲՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱՉՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Բ Է

Գնում և վաճառում արժեթուղթերու. —
Կանխավճար արժեթուղթերու վրայ. — Կտուան-
ձեւէ յաճախողներու հաշիւն համար դան-
ձումներ ընել եգիպտոսի և արտասահմանի
գլխաւոր քաղաքներու մէջ. — Պայմանաժամա-
ւոր վաճառում ամեն տեսակ պարգեւաւոր
արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար գի-
մել Պուլար փողոց եգիպտական հեռագրատան գէմ
Բէսսաչօղլու դրամատունը:

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՅԱՐԱՐ

Էօզպէքիյէ, հայկական պանդոկին քովըն-
տի կամարակապ փողոցը բացած խանութին
մէջ ամենէն զփութարահածները գոհացնելու
եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սո-
վորական գիներով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՍՏԱՆԳՐՈՒՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Կէս ուղ.		Սմ նիւթ		Էքսորէս		Սմ նիւթ	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.
Գահիրէ	մեկ.	առտ. 4 45	—	առտ. 7 —	առտ. 8 15	առտ. 9 30	առտ. 3 30	առտ. 4 45	առտ. 7 15	առտ. 11 —	առտ. 11 —
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առտ. 12 35	առտ. 12 35
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44	1 44
	մեկ.	11 48	6 —	8 34	1 15	11 —	6 26	6 11	—	—	1 54
Տամանհուր	»	էրեկոյ 3 10	7 34	9 41	էրեկոյ 12 49	11 58	7 59	7 7	—	—	3 51
Ալեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	էրեկոյ 1 —	9 40	8 7	—	—	5 50

ԱՂԵՍՏԱՆԳՐՈՒՅԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Կէս ուղ.		Սմ նիւթ		Էքսորէս		Սմ նիւթ	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.
Ալեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	առտ. 9 20	առտ. 2 30	առտ. 4 15	առտ. 6 15	առտ. 11 —	առտ. 11 —
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	առտ. 12 14	առտ. 4 13	առտ. 5 15	առտ. 8 6	առտ. 1 9	առտ. 1 9
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6	3 6
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՏ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՏ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		Երեկոյ	1 20	
Զակադիկ }	ժամ.	1 34	8 54	Զակադիկ)	ժամ.	3 7	8 53
	մեկ.	1 44	9 4		մեկ.	3 17	9 3
Իսմաիլիա	մեկ.	13 40	1 —	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —		մեկ.	4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35